## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

# ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔ

*ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Հերմոնի Վանքը կը գտնուէր Վայոց Ձոր (Եղեգեաց) գաւառին մէջ։ Ունէր երեք եկեղեցիներ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Յակոբ և Ս. Ստեփանոս։ Հոն կը գտնուէին Հերմոն ճգնաւորի նշխարները. — Սիսական, էջ 125–7։ Աճառեան, Ցուցակ Ձեռ. Թաւրիզի, էջ 132։ Սուրմէեան, Ցուցակ Ձեռ. Հալէպի, 1935, էջ 27։ Յիշտ. ԺԵ. Դարի, Մասն Բ., էջ 134։ Ս. Բարխուդարեան, Բանբեր, 1960, էջ 298։*

*ՊԱՏՄԱԿԱՆ. — Հերմոնի Վանքը պատմութեան մէջ կը սկսի փայլիլ ԺԴ. դարուն։ Վանահայրերէն կամ մեծ վարդապետներէն ծանօթ են հետեւեալները.*

1. — **Տիրատուր Վրդ. Կիլիկեցի**, 1338–49. — *Աշակերտ Եսայի Նչեցիի։ Հիմնած է Հերմոնի դպրանոցը 1338ին, ուր րաբունապետի կոչումով կը յիշուի մինչև 1349։ Գերեզմանը կը գտնուի նոյն վանքին մէջ։ Հեղինակ է Քարոզագրքի մը և զանազան մեկնողական գործերու։*

2. — **Գրիգոր Վարդապետ**, 1350?–53?. — *Աշակերտ և յաջորդ Տիրատուր Վարդապետի. — Յովսէփեան, Խաղբակեանք, Բ., էջ 243 ծնթ.։*

3. — **Սարգիս Վարդապետ**. — *Նոյն, անդ։*

4. — **Յովհաննէս Վրդ. Կոլոտիկ**, 1413–+1443. — *Աշակերտ Գր. Տաթեւացիի։ Իր հեղինակութեամբ ծանօթ են Մեկնութիւն Եսայեայ, և Լուծմունք Գրոցն Դիոն. Արիսպագացւոյ։ Մասնակցած է Վաղարշապատի Ժողովին, 1441ին, և հանդիսացած է գլխաւոր գերակատարներէն մին. — Սիսական, 126։ Ազգապատում, էջ 2106, 2124, 2135։ Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Մասն Ա., էջ 164, 755 (109)։*

5. — **Սարգիս Վրդ. Հազարենց**, 1449–74. — *Յիշտ. ԺԵ. Դարի, Մասն Ա., էջ 638։ Ցուցակ Ձեռ. Թաւրիզի, էջ 132։ Աղաւնունի, Միաբանք, 460։ Ցուցակ Ձեռ. Երուսաղէմի, Գ., էջ 20։ Սիսական, 126։ Ամրատեանց, Նկարագիր Երնջակայ, 1904, էջ 176։ Յիշտ. ԺԵ. Դարի, Մասն Բ., էջ 375։*

6. — **Տէր Պետրոս**, *վերակացու եղած է Հերմոնավանքից 1687 թուականէն ոչ շատ առաջ. — Երնջակ, 179։*

*ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Մշակութային կեանքը բաւական պայծառ եղած է Հերմոնի Վանքին մէջ ԺԴ.–ԺԵ. դարերուն։ Հոն ծաղկած են վերը յիշուած հեղինակներէն զատ աւելի քան տասնեակ մը գրիչներ։ Կրնանք թուել հետեւեալները.*

*Ա. — Գրիգոր Վարդապետ*, 1338–53. — *Աշակերտ Տիրատուր Վարդապետի։ Օրինակած է,*

1. — **Դիոնէսիոս Արիսպագացի**, 1338*ին*. — *Յիշտ. ԺԴ. Դարի, Թ.* 377։

2. — **Մեկնութիւն Յոբայ**, 1353*ին*. — *Խաղբակեանք, Բ., էջ 243 ծնթ.։*

*Բ. — Սիոն Դպիր*, 1348*ին օրինակած է մէկ* **Աւետարան**, *Այնա խօջայի պատուէրով. — Յիշտ. ԺԴ. Դարի, Թ.* 448։

*Գ. — Մովսէս Վարդապետ, Դպիր, աշակերտ Տիրատուր Վարդապետի.* 1349*ին օրինակած է մէկ* **Աղօթագիրք** *Գր. Նարեկացիի, որ յետոյ նուիրած է Նահապետ Աբեղային. — Յիշտ. ԺԴ. Դարի, Թ.* 457։

*Դ. — Յովհաննէս Վարդապետ, Դպիր, աշակերտ Տիրատուր Վարդապետի.* 1372*ին օրինակած է մէկ ձեռագիր ?* (№ 478). — *Խաղբակեանք, Բ., էջ 243 ծնթ.։*

*Ե. — Յովհաննէս Վրդ. Կոլոտիկ*, 1413–43, *աշակերտ Գրիգոր Տաթեւացիի։ Օրինակած է,*

1. — **Մեկնութիւն Եսայեայ**, 1415*ին*. — *Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թ.* 181։

2. — **Քարոզգիրք**, *Գր. Տաթեւացիի,* 1418*ին*. — *Նոյն, Թ.* 225։

3. — **Գանձուց Գիրք**, *Կիւրեղ Աղեքսանդրացիի,* 1418*ին, իր աշակերտներուն գործակցութեամբ. — Նոյն, Թ.* 230։

4. — **Լուծմունք Արտաքնոյ**, *Գր. Տաթեւացիի,* 1421*ին*. — *Նոյն, Թ.* 280։

5. — **Աւետարան**, ? . — *Նոյն, Թ.* 317։

6. — **Ճառընտիր**, 1441*ին*. — *Սիսական, էջ* 126։

*Զ. — Գրիգոր Կրօնաւոր, Դպիր*, 1414–25. — *Որդի Հասանի և Մամախաթունի, աշակերտ Կոլոտիկ Յովհաննէս Վարդապետի։ Օրինակած է հետեւեալները.*

digitised by A.R.A.R.@

1. — Գիրք Հարցմանց, Գր. Տաթեւացիի, 1414ին, ժամամբ. — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 164։

2. — Մեկնութիւն ԺԲ. Մարգարէից, Ն. Լամբրոնացիի, 1415ին, Սիւնեցի Սիմէոն Վարդապետի համար. — Նոյն, Թ. 182։

3. — Մեկնութիւն Պատարագի, 1415ին. — Երնջակ, էջ 316, ց. 152։

4. — Մեկնութիւն Մատթէոսի, Գր. Տաթեւացիի, 1417ին. — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 220։

5. — Շարակնոց, 1425ին, Յովհաննէս կրօնաւորի համար. — Սրուանձտեան, էջ 126։

**Է. — Սարգիս կրօնաւոր Դրիմեցի**, 1414–41. — Որդի Հաքիմի, աշակերտ Յովհաննէս Վարդապետի։ Օրինակած է.

1. — Գիրք Պարապմանց, Կիւրեղ Աղեքսանդրացիի. 1414ին. — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 165։ Ձեռ. Ս. Յ., Թ. 1209։

2. — Մեկնութիւն Սաղմոսաց, Գր. Տաթեւացիի, ? — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 166։

3. — Յայսմաւուրք, 1441ին. — Երնջակ, էջ 316, ց. 175։

**Ը. — Գրիգոր Արք. Ախալցխացի**, Գրիչ, որդի Սարգսի և Խէրխաթունի. 1419ին օրինակած է մէկ Գիրք Հարցմանց, Գր. Տաթեւացիի. — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 739։

**Թ. — Կարապետ Դերջանցի**, Գրիչ, որդի Մկրտիչ Քահանայի և Եղիսաբէթի, աշակերտ Յակոբ Աբեղայի. 14.1ին օրինակած է մէկ Քարոզգիրք. — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 286։

**Ժ. — Թումա Սպառակերտցի**, Բերդաւանք գիւղէն որդի Մարգարէի և Շնորհաւորի, աշակերտ Յակոբ Վարդապետի. 1423ին, Հերմոնի Վանքին մէջ օրինակած է ժամամբ Գիրք Հարցմանց, Գր. Տաթեւացիի. — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 314։ Ձեռ. Ս. Յ., Թ. 2181։

**ԺԱ. — Գրիգոր Աբեղայ**, Գրիչ, 1424–9. — Աշակերտ Գէորգ Վարդապետի. 1424ին օրինակած է մէկ Մանրուսմունք, Յովհաննէս կրօնաւորի համար. — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 335։ Ձեռ. Ս. Յ., Թ. 1635։

**ԺԲ. — Յակոբ Քահանայ**, Գրիչ, 1426–57. — Որդի Դաւթի և Մելիքի։ Օրինակած է,

1. — Շարակնոց, 1426ին. — Ցուց. ձեռ. Գարի, Ա. Մաս, Թ. 368։ Սիւրմէեան, Ցուցակ Ձեռ. Հալէպի, 1935, Թ. 9։

2. — Աւետարան, 1457ին. — Ցուց. ձեռ. Գարի. Բ. Մաս, Թ. 117։

**ԺԳ. — Ալէքսանոս Աբեղայ**, Գրիչ, որդի Մկրտիչի և Խանզիկի. 1449ին օրինակած է մէկ Մեկնութիւն Մատթէոսի, Գր. Տաթեւացիի. — Ցուց. ձեռ. Գարի. Ա. Մաս, Թ. 712։

**ԺԴ. — Զաքարիա Գրիչ**, 1460ին օրինակած է մէկ Աւետարան. — Երնջակ, էջ 176։ Սրուանձտեան, 126։ Ցուց. ձեռ. Գարի, Բ. Մաս, Թ. 175։

**ԺԵ. — Յովհաննէս Գրիչ**, 1465–72. — Օրինակած է.

1. — Ճաշոց, 1465ին, տէր Մանուէլ Քահանայի խնդրանքով. — Երնջակ, 216–8։

2. — Գանձարան, 1472ին, բանաւէր Յակոբ Վարդապետի պատուէրով. — Ցուց. ձեռ. Գարի, Բ. Մաս, Թ. 426։

**ԺԶ. — Անանիա Աբեղայ**, Գրիչ, 1469ին օրինակած է.

1. — Աւետարան, Ստեփանոս Քահանայի համար. — Ցուց. ձեռ. Գարի, Բ. Մաս, Թ. 372։

2. — Մաշտոց, պարոնտէր Պաւղոսի համար. — Նոյն, Թ. 371։

**ԺԷ. — Եսայի Գրիչ եւ Ծաղկող**, 1473ին օրինակած է մէկ Աւետարան, ժողովաթի վրայ, Յեսկար Աղայի համար. — Բարխուդարեան, Արցախ, էջ 139։ Ցուց. ձեռ. Գարի, Բ. Մաս, Թ. 441։

**ԺԸ. — Երեմիա կրօնաւոր**, Գրիչ, 1478ին օրինակած է Աւետարան մը, զոր կը ստանայ բանաւէր Յակոբ Վարդապետ, և կը շնորհէ իր աշակերտ Մկրտիչ Քահանային. — Ցուց. ձեռ. Գարի, Բ. Մաս, Թ. 542։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@